



ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԻ ՀԱՎՈՐՅԱՆ

(Բանասիրական գիտությունների դոկտոր)

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ

Հայոց պատմության հիմնադիրն ու քերթողահայրը ծնվել է մոտավորապես 410—415 թվականներին, Տարուն գավառի Խորոնք գյուղում: Համարվում է մեկը Սահակ-Մեսրոպի կրտսեր աշակերտներից և երբայրը՝ Մամբրե վերծանողի:

Ուման մեջ կատարելագործվելու համար սովորել է Բյուզանդիայում, Աթենքում, Պաղեստինում, Ալեքսանդրիայում: Հայաստան վերադառնալուց հետո նշանակվել է Բագրեվանդի և Արշարունյաց եպիսկոպոս: Ժամանակի սահմանափակ որոշ հոգևորականների կողմից ենթարկվել է հալածանքի: Թաղված է Մշո գավառի ս. Առաքելոց վանքում: Մահացել է շուրջ 490-ական թվականներին: Թողել է հարուստ պատմագրական ժառանգություն՝ «Պատմութիւն հայոց», «Պատմութիւն պատկերի Տիրամօր», «Պատմութիւն և ներքողեան Հոփսիմեանց», «Գիրք Պիտոյից», «Ճառ վարդապետի», «Մեկնութիւն քերականի», զանազան թղթեր, ճառեր և շարականներ:

* * *

Շարակնոցի առաջաբանում գրված է. «Մովսես Քերթողն՝ զԾննդեանն, զՄեծացուցեքն, զՏեսարնդատաջին, զփոխմանն առաջին պատկերն, այլև զվարճն Յարութեանն սորա է ասացեալ...»¹:

Հինգերորդ դարի հայ շարականագիրների մեջ Մ. Մաշտոցից հետո Խորենացին երկրորդ նշանավոր հեղինակն է համարվում: Ըստ ձեռագրերի, նոր փաստերի և բանասիրական նորագույն հետազոտությունների Մ. Խորենացին գրել է տերմինական տոմարի հետևյալ կանոնները:

Աստվածահայտնության և Ավետյաց կանոններում՝ հետևյալ օրհնությունները՝ «Ուրախացիր Սրբոմի», «Խորհուրդ մեծ և սքանչելի», «Այսօր Բանն ի Հօրէ», «Էակից Հօր և Հոգւոյն», «Այսօր Գաբրիէլ ցնծութեամբ», «Այսօր որ յաթոռ փառաց», «Անսկզբնական տեսիլ», «Անեղանելի բնութիւն», «Լոյս ի լուսոյ», և «Այսօր ցրնճան երկինք» պարականոն շարականը:

Ծննդյան կանոններում Խորենացին ունի միայն երեք **Հարց**, որից երկուսը կանոնական՝ «Որ դասուց երկնատրաց», «Անըսկիզբն էակից Բանն Հօր» և պարականոնը՝ «Ուրախ լեր Մարիամ, սուրբ Աստուածածին»: Այս կանոններում Խորենացին գրել է հետևյալ 12 **Մեծացուցեքները**՝ «Անարատ կոյս», «Աստուածածին Մայր լուսոյ», «Ուրախացիր Աստուածածին», «Անթառամ ծաղիկ», «Աստուածածին սուրբ կոյս», «Չքեզ Աստուածածին», «Չքեզ կոյս և մայր», «Աստուածածին սրբոմի», «Չքեզ մայր կուսութեան», «Լոյս ի լուսոյ, մայր և կենարար», «Որ զանճատելին ծնար» և «Սին լուսոյ և ամպ հովանի», 6 **Ողորմեաներ**՝ «Չա-

¹ Շարակնոց, Երուսաղեմ, 1936, էջ 5:

հատր բարբառս վերնոցն», «Որ կերպարան
 Հօր», «Ջքեզ աղաչեմք», «Որ էրն ի սկզբ-
 բանէ», «Հրաշափստ ծնունդ» և «Խոնարհե-
 ցար ի բարձանց»: 1 Մանկունք՝ «Ծագումն
 հրաշալի»:

Տեսանքնդատացի կանոնում Մ. Խորենա-
 ցուն են պատկանում «Մարմնացեալդ ի կու-
 սէն» և «Այսօր ի տաճարն եկիր» օրհնու-
 թյունները, «Օրհնեմք զքեզ» Հարցը (իր
 գործատնով), «Աթոռ քրովքէական» Մեծա-
 ցուցեն, «Որոյ ստեալ» և «Ձոր փառաբա-
 նեն» Տերհերկնիցները և «Անկիզբն Բանն
 ի Հօրէ» Ծառու շարականը:

Վերափոխման կանոնում (առաջի պատ-
 կեր) ունի «Այսօր ծողովեալ արբոցն» օրհ-
 նությունը, «Որ գնախամօրն» Հարցը (իր
 գործատնով), «Խորանայարկ կամարանը-
 ման» Մեծացուցեն, «Որ ունիս իշխանու-
 թիւն» Ողորմեան և «Անկիզբն Աստուած»
 Տերհերկնիցը:

Այսպիսով, Ծննդյան կանոններում Խորե-
 նացին ունի 33, Տյառնընդատացում՝ 7 և Վե-
 րափոխման կանոնում՝ 5 շարական, ընդա-
 մենը՝ 45, որից՝ 14 Օրհնութիւն, 5 Հարց, 14
 Մեծացուցե, 7 Ողորմյա, 3 Տերհերկնից,
 մեկ Մանկունք և մեկ Ծառու:

Մ. Խորենացու գրած բազմաթիվ շարա-
 կանների մեջ, իրենց քնարականությամբ,
 թափով ու ջերմությամբ այքի են ընկնում
 Ծննդյան կանոնի Օրհնություններն ու Մե-
 ծացուցեները:

Նախ՝ ծանոթանանք Քրիստոսի ծննդյան
 կանոնում Ավետոյաց տոնին նվիրված շարա-
 կաններին: Ըստ բանաստեղծի՝ հրեշտակի՝
 Մարիամին ավետելը մի «անճառ խորհուրդ»
 է, որը մինչև այդ ծածուկ է մնացել «յագգաց
 և յախտենից»: Գաբրիել հրեշտակապետը
 հայտնում է Մարիամին աստվածային խոր-
 հուրդը՝ թէ

«Անտանելին ի համայնից, բովանդակիչ
 բնութեանց բոլորից,
 Պարագրի այսօր մարդասիրապէս յորո-
 վայնի անարատ կուսին»²:

Եթէ Մարիամի ծննդյան շարականներում
 զանազան որոշիչներով ու այլաբանությամբ
 գծագրվում է կույսի և աստվածամոր պատ-
 կերը, նույն ձևերով ու եղանակներով էլ այս-
 տեղ Խորենացին բնութագրում է Քրիստո-
 սին և նրա մարդկության խորհուրդը: Ըստ
 այս օրհնության, Քրիստոսի մարդկության
 նպատակն է՝ փրկել տիեզերքը, լուծել Ադա-
 մի մեղքերը և կատարել ս. Գրքի կանխա-
 գուշակումները:

«Որախացիր սրբուհի Գաբրիէլի անե-
 տօք» օրհնության մեջ, քնարական մոտիվ-
 ների հետ աստվածաբանական գաղափար-

ներ էլ են դրսևորվել, քանի որ դրանք շատ
 սերտ առնչված են Փրկչի մարդկության
 խորհրդի և շարականի նյութի հետ: Ծարա-
 կանի մեջ պարզ երևում է նաև ինքը՝ բա-
 նաստեղծը իր վերաբերմունքով ու ջերմ
 զգացմունքներով: Նա այնպես է խոսում
 Մարիամի հետ, որը կարծես ներկա է, և
 բանաստեղծը ուղղակի կենդանի գրույց է
 ունենում նրա հետ.

«Ողջոյն ընդ քեզ Մարիամ,
 Ի քեզ սուրբ Հոգին եկեացէ...»³:

Ամբողջ Օրհնությունը հորդում է ուրա-
 խությամբ ու բերկրությամբ,
 «Որախացիր, սրբուհի, Գաբրիէլի անե-
 տօք...
 կոյս...

Ուրախ լեր բերկրեալ, ամենասուրբ
 կոյս...
 Ուրախ լեր բերկրեալ, դուռն կնքեալ...
 Ուրախացիր Աստուածածին՝ վերօրհ-
 նեալդ ի Սրովքէից»⁴:

Այս ուրախ մոտիվներից հետո սկսվում է
 ս. Երրորդության փառաբանությունն՝ ինչ-
 պես մեր շարականներից շատերում: Փառա-
 բանական տրամադրությունն ուժեղ է ար-
 տահայտվել այդ կանոնի «օրհնեմք զքեզ»
 բառերով սկսվող Տերհերկնից շարականում՝
 այսպէս՝

«Օրհնեմք զքեզ Աստուած...
 Գույեմք զքեզ Միածին...
 Բարեբանեմք սուրբ զՀոգիդ...»⁵:

Փառաբանությունից հետո գալիս են եր-
 կրոպագության և խնդրանքների տողերը.
 «Անկանհիմք առաջի քո Աստուածածին,
 Եւ աղաչեմք զանարատ գլոյսդ...»⁶:

Իսկ ինչի մասին են շարականագրի
 խնդրանքները: Այստեղ արդեն Տիրամայրը
 պիտի բարեխոսի Փրկչի առաջ, որպեսզի
 առօրյա կյանքում գոյություն ունեցող բոլոր
 փորձություններից և վտանգներից մարդկու-
 թյունը հեռու մնա.

«Փրկել զմեզ ի փորձութենէ,
 Եւ ամենայն վտանգից մերոց...»⁷:

Ինչպես Աստվածածնի ծննդյան և Ավետ-
 յաց տոների, այնպես էլ Քրիստոսի ծննդյան
 տոնի առթիվ գրված առաջին օրերի շարա-
 կանները սկսվում են Մ. Խորենացու գրած
 օրհնություններով: Վերջիններիս մեջ ամե-
 նանշանավորը և ժողովրդի մեջ ամենատա-
 րածվածը «Խորհուրդ մեծ և քանչեղի» շա-
 րականն է, որն երգվում է ոչ միայն եկեղե-

³ Անդ, էջ 32:

⁴ Անդ, էջ 32—34:

⁵ Անդ, էջ 35:

⁶ Անդ:

⁷ Անդ:

² Ծարակնց, էջ 24:

ցում, այլև եկեղեցուց դուրս՝ հանդեսներում և Ծննդի առթիվ տները շրջող՝ «Ավետիս» երգող պատանիների կողմից:

Ահա այդ երգից մի քանի տող.

«Խորհուրդ մեծ և սքանչելի,
Որ յայն ատր յայտնեցաւ,
Հովիւքն երգեն ընդ հրեշտակս՝
Տան անտիս աշխարհի»⁸:

Բանաստեղծը ամենից շատ ինքն է հիացած այդ մեծ խորհրդով: Ինքն էլ հովիվների ու հրեշտակների հետ երգում է Քրիստոսի ծնունդը և ավետիս է տալիս աշխարհին, թե՛

«Ծնաւ նոր արքա ի Բեթղեհեմ քաղաքի,
Որոյիք մարդկան օրհնեցէք՝
Զի վասն մեր մարմնացաւ»:

Այն «Անբովանդակալիս», որին չեն կարողացել պարփակել երկինքն ու երկիրը, այսօր համատարեան տեղավորվել է միայն մի այրի ու մտրի մեջ: Ահա դրա համար էլ

«Այսօր ցնծան երկինք ի վերուստ՝
Մեծապայծառ անտեօք»⁹:

Քրիստոսի ծննդյան առիթով հրեղենների բազմությունը երկնքից իջել է երկիր. մի կողմից իրենք՝ երկնային բնակիչներն էլ են զարմացած, իսկ մյուս կողմից էլ ավետիս են տալիս աշխարհին: Հովիվներն էլ իրենց հերթին են փառաբանում նորածին Փրկչին.

«Այսօր հովվուացըն տեսեալ,
Զարդարութեան արեգակն,
Եվ ընդ հրեշտակս երգէին՝
Փառք ի բարձունս Աստուծոյ»¹⁰:

Ծննդյան երկրորդ օրվա Օրհնությունը նույնպես փառաբանական, ներբողական կողմերի հետ միասին ունի նաև դավանաբանական մտիվներ: Այժմ էլ Քրիստոսի ծնունդը այլ պատկերներով ու այլաբանությամբ է խորհրդավորում: Փրկչի ծնունդն այստեղ համարվում է «Բանն ի Հօրէ անկրկնելի խորհուրդ»: Այդ «Բանն» անցնելով կուսական որովայնից, նոր է հայտնվում աշխարհին ու մարդկանց: Ծարականազիրը Քրիստոսին համարում է «Մանուկ անծամանակ», ծնած «անսերմն ի կուտէ» և այլն: Երեսուն տարի հետո Փրկիչը մկրտվում է Հորդանանի ջրերում, Հովհաննես Մկրտչի ձեռքով և դրանով մաքրում մարդկության դարավոր մեղքերը.

«Որ մաքրեացըն զՅորդանան,
Եւ լուաց զմեղս աշխարհի,
Զոր օրհնեն անդադար արարածք ամենայն,

ԶԷակիցըն Հօր և Հոգւոյն»¹²:

Դավանաբանական և փառաբանական մտիվները գլխավորապես Օրհնության առաջին մասում են: Երկրորդ մասում բանաստեղծը զանազան համեմատությամբ և պատկերներով բացատրում է փրկագործությունը, որպես Լուսավորիչ և Փրկիչ: Այս առումով էլ նա Հիսուսին համեմատում է արեգակի հետ.

«Լոյս ի լուսոյ ծագեալ ի Հօրէ,
Եւ լուսատրեաց ըզտիեզերս,
Ծնունդ անսպական, անբատուն լուսոյն,

Զոր միշտ փառատրեն դասք անմարմնոցն»¹³:

Այդ Փրկիչը ծնվում է Բեթղեհեմի քաղաքներից մեկում: Հովիվներն ու մոզերը աստղերի ցուցումով գալիս, գտնում են նորածին Փրկչին՝ մտրում, խանձարորում փաթաթված: Հովիվները երկրպագում են նորածնին: Սակայն, ըստ շարականի, աշխարհի ու մարդկանց մեջ, նույնիսկ երկնային արարածներից էլ ավելի պիտի խնդա և ուրախ լինի ինքը՝ «լուսոյ մայրը»՝ Մարիամը:

«Խնդա և ուրախ լեր, անհարսնացեալ Մարիամ,

Քանզի որ ի քէն ծնաւ Փրկիչ,
Տէր և Օծեալ ի քաղաքի Դաթի,
Զոր միշտ փառատրեն դասք երջանիկ հովուացն»¹⁴:

Երկրորդ օրվա Մեծացուցեան նորից Տիրամոր փառաբանությունն է՝ լուսե պատկերներով ու համեմատություններով.

«Լոյս լուսոյ մայր և կենարար Բանին բնակարան,
Լոյս ծագեցաւ ի քէն նստելոցս ի խարի...»¹⁵:

Միաժամանակ Մարիամը ոչ միայն լուսի, այլև ստեղծողի մայրն է, որի համար բոլոր ազգերն ու ցեղերը բախտավոր են համարում նրան և երանի տալիս.

«Ստեղծողին մայր և հնութեան կերպի նորոգողին՝
Քեզ երանեն ազգ և ազինք ամենայն...»¹⁶:

⁸ Անդ, էջ 38:

⁹ Անդ:

¹⁰ Անդ:

¹¹ Անդ, էջ 39:

¹² Անդ, էջ 43:

¹³ Անդ:

¹⁴ Անդ, էջ 44:

¹⁵ Անդ, էջ 45:

¹⁶ Անդ:

Ըստ այդ կանոնի՝ Տերհերկիցի՝ «Դասը անմարմնականը՝ երկնավոր գործերն ու հովիվները Բերդեհեմի բարայրի դասն ինքս միացած՝

«Օրհնեն զծագումն լուսոյ մեծին ի չորէ... իսկ սոգերը՝
«Աստեղը նշանա եկին ի Բերդեհեմ,
Երկրպագին Տառն,
Եւ ի յայրին մատուցին զընծայս խորհրդոր...»¹⁷:

Այստեղ, մի ուրիշ Մեծացուցեի մեջ Տիրամորը հատկացված ստորոգելիները նրան հասցնում են մեծարանքի գազաթեանկետին. Մարիամը համարվում է՝

«Ամենագովելի ի քան զերկինս բարձրագոյն»,

Երկնայինների մեջ էլ համարվում է՝
«Ամենապայծառ, քերկրեալ միշտ կոյս»¹⁸:
Վերջին տան մեջ հեղինակը Տիրամորը

այլաբանորեն կապում է Դանիել մարգարեի նախագուշակումներից մեկի հետ.

«Ի լեռնէ վէմն՝ առանց ձեռին հաստեալ,
Դանիէլ գուշակեաց զանետրմն զձնունդը,
Հարսն երկնատր, մայր հետ ձննդեան մնալով կոյս,
Վասն որոյ ամենեքեան զքեզ միշտ մեծացուցանեմք»¹⁹:

Հետևյալ կանոնի, «Հակից Հօր» օրհնությունը, ըստ էության նույնպես դավանաբանական է: Խորենացու ժամանակ դավանաբանական հարցերը ուժեղ էին արծարծվում, հուզող խնդիրներ էին: Դրանք կապված էին միաբնակության և երկբնակության դավանական վեճերի հետ: Մ. Խորենացու գրած Ծննդյան կանոնների շարականներում հաճախ են շոշափվում այդ բնույթի հարցերը:

Ծննդյան երրորդ օրվա կանոնի օրհնության մեջ Քրիստոսը համարվում է.

«Հակից Հօր և Հոգույն, անսկիզբն Որդի. Անմայր յառաջնումն անդրանիկ, Եւ ընդ Հօր յախտեան...»²⁰:

«Սքանչելագործ Աստուած» Հարցի մեջ ցույց է տրվում Փրկչի ուժը, մեծությունը և փառքը, նա նստում է քրովքեական աթոռը, վեցթևյան սրովքեքը չեն համարձակվում նայել նրա աստվածային տեսքին, մինչդեռ այսօր նա «որում ոչ բաւեն երկինք ընդունի զանբաւելի բնութիւնը» կարողացաւ տե-

դավորվել կնոջ արգանդում և գրկում: Ավելին. այսօր ծնվել է մի այնպիսի «բազառոր... Մեյրումն դոյան իմանալի գորութիւնքն»²¹: Մեծացուցեի մեջ Մարիամը մեծարվում է որպէս «անհարսնացեալ մայր», «անսպական տաճար», «առագաստ լուսոյ» և այլն: Ամենագարմանալին այն է, — ստում է հեղինակը, — թե.

«Հորն կենդանի որ ի մորենին վառեցաւ,
Զոր անվասա արգանդի քում կրեցեր,
Եւ ծնար Աստուած և մարդ»²²:

Չորրորդ օրվա կանոնը նույն թեմաներով է համակված: Գարբիել հրեշտակապետը ուրախ երգելով սուրբ կոյսին հայտնում է երկնայինի ավետիսը: Մոգերը հետևելով աստղերի ցույց տված նշաններին, գալիս, գտնում են նորածին Փրկչին և երկրպագում: Քրիստոսի ծնունդը համարվում է տիեզերական երևույթ.

«Այսօր տիեզերք պայծառացան,
Աւետօք սրբոյ կուսին,
Քանզի Բանն մարմին եղև,
Եւ բնակեաց ի մեզ»²³:

Առանձնապես գեղեցիկ ու քնարական է այս կանոնի հետևյալ Մեծացուցեն, որտեղ շարականագիրը դիմելով Մարիամին, ստում է.

«...Դո՛ւ պարծանք կուտութեան մարդկան,
Դո՛ւ ուրախութիւն հրեշտակաց,
Դո՛ւ բարձող անհիծիցն»:
Դո ու նշմարիտ արևելք՝
Սրեգականն արդարութեան,
Յորմէ ծագեաց
Փրկութիւն տիեզերաց,
Միաբանական ձայնի երգով մեծացուցանեմք»²⁴:

Հինգերորդ օրվա կանոնի Մեծացուցեի առանձնապես վերջին տան մեջ մի քանի տողով հակիրճ ամփոփված է, թե ի՞նչ դեր է խաղացել Աստվածածինը մարդկությանը փրկելու գործում: Հեղինակը դիմելով Տիրամորը ստում է.

«Քն լուծան կնիք դատապարտութեան,
Եւ քն կանգնեցաւ մեղուցեալ մայրն գլորեալ...»²⁵:

Այսպիսի բնույթ է կրում նաև յոթերորդ օրվա կանոնի «Սիւն լուսոյ» Մեծացուցեն: Փառաբանվող Տիրամորը բնորոշող բոլոր պատկերներն այստեղ վերցված են բնություն-

¹⁷ Անդ, էջ 45—46:
¹⁸ Անդ, էջ 47:
¹⁹ Անդ, էջ 47:
²⁰ Անդ, էջ 48:

²¹ Անդ, էջ 48:
²² Անդ, էջ 50:
²³ Անդ, էջ 54:
²⁴ Անդ, էջ 55:
²⁵ Անդ, էջ 61:

նից, այս տեսակետից էլ ութ օրվա բոլոր կանոններում եղած բազմաթիվ Մեծացուցեաներից սա ամենագեղեցիկն ու պատկերավորն է:

Առաջին տան մեջ Մարիամը համարվում է՝

«Սին լուսոյ և անպ հովանի սուրբ կոյս, Յօղեցեր ի մեզ գցողն երկնային»²⁶:

Երկրորդ տանում՝

«Անկէզ մորենի և սրովբէ հողեղէն սուրբ կոյս, Քանգի պտուղն կենաց ի քէն տուա մեզ»²⁷:

Վերջին տան մեջ Աստվածածինը հանդէս է գալիս որպէս՝

«Անիծից լուծիչ և քառիչ մեղաց սուրբ կոյս»²⁸:

Պատկերավորության և այլաբանության հարստությամբ Ծննդյան օրերի ութ կանոնների մեջ աչքի է ընկնում ութերորդ օրվա «Լոյս ի լուսոյ» օրհնության երկրորդ մասը:

Բանաստեղծը որպէսզի ցույց տա, թե ինչպէ՞ս և ի՞նչ ձևերով է Փրկիչը մարդկությանը ազատագրել մեղքերից, դիմելով Հիսուսին, գրում է հետևյալ պատկերավոր տողերը.

«Ըզբեզ որ հոգով և հրով մաքրեցեր
զմարդկան ալտերութիւն...
Փրկիչն երևեցաւ զաշխարհս ապրեցոյց ի
պատրանաց թշնամոյն...
Ջրով կիզու զմեղս մեր այսօր երևեալ ապրեցուցիչն
Եւ զովացուցանէ զաշխարհս աստուածային ջրովն»²⁹:

Աստվածածնի և Քրիստոսի ծննդյան տոների վերաբերյալ Մ. Խորենացու գրած շարականները բազմաթիվ են և մենք դրանք բոլորը քննության չենք ենթարկել՝ կրկնություններից խուսափելու համար: Կանոններում եղած Օրհնություններից, Մեծացուցեաներից, Տերհերկնիցներից ու Հարցերից շատերը գրեթե կրկնում են իրար՝ բովանդակության, ոճի, պատկերների և մտքի տեսակետից: Դրա համար էլ մենք ընտրել և քննության առարկա ենք դարձրել դրանցից այնպիսիները, որոնք որոշ չափով ինքնուրույն են, պատկերավոր ու քնարական:

* * *

Այժմ անցնենք Տյառնընդատաջի և Վերա-

վոխման տոների ստիժի գրված շարականներից:

Խորենացին Տյառնընդատաջի տոնին նվիրել է 7 շարական, որից երկուսը՝ Օրհնություն, մեկ Հարց, երկուսը՝ Տերհերկնից, մեկ Մեծացուցե, և մեկ Ծաշու:

Տյառնընդատաջի տոնի կանոնի շարականները նվիրված են Քրիստոսի այցին Երուսաղեմ, Սողոմոնյան տաճարին: Տաճարում Սիմեոն ծերունին, որը սպասում էր Մեսիայի Գալստյանը, իր աչքով տեսնում է Փրկիչին և հայտարարում համարձակ: Նա գոհությամբ է լցված դեպի Արարիչը, և ասում է «Արդ, արձակես զճառայս քո, Տէր, խաղաղութեամբ»: Տյառնընդատաջի, ինչպէս և մյուս բոլոր տերունական տոների շարականների մեջ ամենագլխավորը Օրհնություններն են, իսկ մնացածները լրացնում ու խորացնում են Օրհնության արտահայտած հիմնական գաղափարները:

Այս կանոնն ունի երկու Օրհնություն. մեկը՝ «Մարմնացեալդ ի կուսէն», իսկ մյուսը՝ «Այսօր ի տաճարն եկիր»: Առաջին Օրհնության մեջ, ըստ Ավետարանի պատումի՝ հեղինակը տալիս է Փրկչի Երուսաղեմ գալու խորհուրդն ու նպատակը: Դրա հետ արտահայտում է միաժամանակ նաև դավանաբանական և աստվածաբանական գաղափարներ.

«Մարմնացեալդ ի կուսէն նախալսիտեան
Բանդդ,

Այսօր ի տաճարն եկիր կատարել զօրէնս՝
Վասն փրկութեան հեթանոսաց»³⁰:

Մյուս տան մեջ բարեբանվում է Փրկիչը՝ իր համեստության, միաժամանակ մեծության և մարդկությանը նոր կյանք պարգևելու համար.

«Որ յանարուեստ այթոռ նստիս բարեբանեալդ ի հրեշտակաց,

Այսօր ի Սիմեոնի բառնալով ի գիրկս,
Որ ընծայեացես զմեզ ի կեանսդ յաիտեցից»³¹:

Ապա վերջին տան մեջ բանաստեղծը խնդրում է Փրկչից, որ Սիմեոն ծերունու բարեխոսությամբ արժանանա հավիտեական կյանքին:

«Որ արձակիչդ ես կապելոց, պարգևատու ամենեցուն,
Այսօր հայցմամբ ծերունույն արձակես և զիս զբազմամեղրս
Ի կապանաց մահու ի կեանսդ յաիտեցից»³²:

²⁶ Անդ, էջ 73:

²⁷ Անդ:

²⁸ Անդ:

²⁹ Անդ, էջ 74—75:

³⁰ Անդ, էջ 94:

³¹ Անդ, էջ 94:

³² Անդ, էջ 95:

Մյուս Օրհնության մեջ շոշափվում են դարձյալ նույն գաղափարները՝ տարբեր ձեւերով: Միևնույն Օրհնության երկու տները դրանց հետ միաժամանակ Քրիստոսը բնորոշվում է որպէս լույս ու լուսավորիչ և «իմանալի արեգակ»:

«Այսօր աշխարհի ցուցեր լույս եւ փրկութիւն տիեզերաց...»³³:
Այսօր իմանալի արեգակըն,
Որ ծագեցար տիեզերաց...»³⁴:

Կանոնի մեջ եղած «Օրհներբ գրեգ, որ առաքեցար ի Հօրէ» Հարցը նույնպէս կրկնում է Քրիստոսի տաճար գալու դէպքը: Ինչպիսի ձևերով որ Հարցը կրկնում է Օրհնությունների արձարձած մտքերը, նույնպէս էլ գործատունը կրկնում է Հարցի շոշափած մտքերը:

«Աթոռ քրովբեական» Մեծացուցեցն ճկիրված է Միմեոն ծերունուն.

«Աթոռ քրովբեական երևեալ այսօր Միմեոն,
զԱստուածորդին ի գիրկս իր բարձեալ մարմնով,
Զոր գորբ երկնից ի բարձունս հանապագ մեծացուցանեն...»³⁵:

Երկրորդ տունը դրսևորում է օրվա դէպքի ստիժով Միմեոնի մեջ առաջացած ուրախ տրամադրությունը.

«Հոգովն գոչէր, ցնծայր պեօքն ծերունիսի սաւելով

Սա է թագաորն անմահ,
Զոր գորբ երկնից ի բարձունս հանապագ մեծացուցանեն»³⁶:

Եվ վերջապէս ուրախության արցունքներն աչքերին՝ Միմեոնը Փրկչից խնդրում է.

«Արտասուելով աղերսէր՝
Արձակեա գիս ի խաղաղութիւն,
Անարատ ծնողի քո բարեխօսութեամբ»³⁷:

Կանոնում եղած «Որոյ առեալ հրաման» Ողորմչալի մեջ շարականի հեղինակը երկնից սպասվող շնորհները խնդրում է ստանալ Միմեոն ծերունու աղոթքներով ու միջնորդությամբ.

«Որոյ առեալ հրաման ի սուրբ հոգւոյն՝
Ոչ տեսանել զմահ միջնչ տեսցէ զօծեալն,
Տէր, աղօթիս ծերոյն, ողորմեա»³⁸:

Այդ նույն ոգով է գրված նաև «Զոր փառաբանեն ի բարձունս» Տերհերկնիցը: Այստեղ շարականի գլխավոր միտքն այն է, որ Քրիստոսը մարդկությանը փրկելու համար է մարմնացել և քանի որ այդպէս է, ուստի շարականի վերջին տան մեջ քանաստեղծն ստամ է.

«Վասն որոյ և մեք ընդ Միմեոնի գոչեմք,
Որ ի Հօրէ լուսոյ լույս ծագեցար մեզ և կեանք,
Փառք գալստեանն քո Տէր»³⁹:

* * *

Աստվածածնի Վերափոխման տոնի միայն առաջին պատկերն է պատկանում Մ. Խորենացուն, այսինքն միայն առաջին օրվա շարականները (տոնն ունի երեք օր, կամ «պատկեր»), որոնք հետևյալներն են՝ «Այսօր ծողովեալ ի սրբոց» օրհնությունը, «Որ գնախաւօրն գլանցանս» Հարցը՝ իր գործատունով, «Խորանայարկ կանարանման» Մեծացուցեցն, «Որ ունիս իշխանութիւն մահու և կենաց» Ողորմչան և «Անակիգբն Աստուած» Տերհերկնիցը. ընդամենը՝ հինգ շարական: Այստեղ էլ տոնի օրվա բոլոր շարականների ուղղությունն ու մտիվները որոշողը օրհնությունն է: Տիրամայրը վախճանվել է, որի թաղման ու երկինք վերափոխման հանդիսավոր դէպքի ստիժով հավաքվել են առաքյալներն ու իմաստուն կույսերը, որոնք

«Այսօր ծողովեալ սրբոցն ի միասին,
Երանելի առաքեալքն և սուրբ կուսանքն՝
Զահագգեստութ պայծառացեալք լույսանէին,

Զլսպտերս իրեանց և միաձայնեալ սաւէին՝

Օրհնեալ ես՝ ամեհօրհնեալդ ի կանայս»⁴⁰:

Ապա շարականագիրը նկարագրում է, որ երբ կույսի մարմինը մտնեցանում են գերեզմանի դռանը, բոլոր ներկաները հուզմունքով սպասում էին Փրկչին.

«Այսօր դնելով սուրբ կույսն առ դրանն գերեզմանին,
Սպասէին և ակն ունէին Տեսուն, իսկ ինքնին գողով,
Գեր ի վերոյ տեսեալ զԱրարիչն եկեալ քազում հրեշտակօք,

Եւ անցա միաձայնեալ սաւէին՝
Օրհնեալ ես՝ ամեհօրհնեալդ ի կանայս»⁴¹:
Սակայն, ըստ շարականի Մարիամ Աստ-

³³ Անդ, էջ 96:
³⁴ Անդ, էջ 96:
³⁵ Անդ, էջ 98:
³⁶ Անդ:
³⁷ Անդ:
³⁸ Անդ:

³⁹ Անդ, էջ 99:
⁴⁰ Անդ, էջ 617—618:
⁴¹ Անդ, էջ 618:

վածածնի թաղումը երկրում չի կայանում: Երկնաբնակները Քրիստոսի հետ իջնում են երկիրը, հավաքվում Տիրամոր մարմնի շուրջը, երգում պատշաճ երգեր ու փառաբանում, ապա քիչ հեռու տեղի է ունենում հրաշքը:

«Այսօր տեսեալ գտորք կոյսըն թոռցեալ յօրս, եւ ամպեղէն կառօքն ի վեր համբարձեալ յերկինս, Մտանելով յերկնային խորանսն ընդ իմաստուն կուսանսն, եւ օրոցս միաձայնեալ ասէին՝ Օրհնեալ ես՝ ամենօրհնեալդ ի կանայս»⁴²:

Երկնային ճամփեքով, ամպերի վրայով թռչելով, հրեշտակների բազմաթիվ հրեղեն խումբը Տիրամոր մարմինը հասցնում է երկնի ամենավերին շերտերը:

«Յօթնաստեղեան խորանսն»⁴³:

Հարցի առաջին տունը հատկացված է Աստվածածնին, որն իր երկունքով ու ծննդյամբ լուծել է նախամոր (Եվայի) կատարած հանցանքը: Ահա այս նպատակով էլ մարդացել է Փրկիչը:

«Որ զնախամօրն զյանցանս երկանցն եքարձ, եւ գորդիդ քո միածին մարմնով ծնաւ...»⁴⁴:

Ահա դրա համար էլ հատկապես մեծարվում է կույսը, այդպես և նրա մարմինը տեղափոխում են երկինք:

«Այսօր առ ի մէնջ ի վերին գօրսն փոխեցեր, Ջնախաստեղծին ծնունդն, գոր միշտ ունիմք բարեխօս...»⁴⁵:

Հարցի երկրորդ տունը վերաբերում է Հիսուսին:

«Որ Էակիցդ ես Հօր և սուրբ հոգւոյն, Մարմնանալ ի յանձն աներ ի սրբոյ կուսէն,

Այսօր փոխադրեալ դասեցեր յերկնային խորանսն Ջրոյին ծնողն, գոր միշտ ունիմք բարեխօս...»⁴⁶:

Վերջին տունը նվիրված է ս. Հոգուն:

«Որ յամենայնի ես լցուցիչ, բարեխնամ սուրբ հոգի, Այսօր պարգևօք հանգուցեր յանպատում ի կեսնս՝

Ջկուսութեանց մայրն, գոր միշտ ունիմք բարեխօս...»⁴⁷:

Հարցի գործատան մեջ էլ, ինչպես բոլոր Հարցերում, չի շոշափվում Բաբելոնի «երից մանկանց» խնդիրը: Ամբողջ գործատունը նույնպես վերաբերում է Տիրամոր վերափոխմանը և փառաբանությանը:

«Բարձր արարէք զծնող... բանին միշտ կոյսն...

Ջբարեբանեալդ անդադար միշտ ի վերին գորաց...

Ջվերափոխեալդ ի դասս առաքելոց և մարգարէից...»⁴⁸:

Կանոնի «Խորանայարկ կամարանման» Մեծացուցեի մեջ արդեն մեծարվում է Տիրամայրը:

«Որ ունիս իշխանութիւն» Ողորմյայի մեջ բանաստեղծը ակնարկում է Քրիստոսի հարությունը և Տիրամորը:

«Տօնելով զիշատակ կուսի Աստուածորդւոյ մօր,

Հրճուին հրեշտակք ի յերկինս և ցնձան, Դասք առաքելոց և մարգարէից ընդ կուսական տօնս»:

Կանոնի վերջին շարականը «Անակիզբն Աստուած» Տերհերկնիցն է, որը մի հատուկ փառաբանություն է՝ ձոնված ամենասուրբ Երրորդությանը:

Հրեղեն կառքերով Տիրամոր մարմինը տեղափոխվում է մարդկային բնության համար անհասանելի երկինքը: Այստեղ Տիրամայրը որակվում է «մարգարտատեսիլ», «ծիրանագգեստ», «հրաշափառագոյն», «համատարած լոյս» և այլ մակդիրներով:

Մ. Խորենացու գրած մի քանի տասնյակ տարբեր բնույթի շարականները իրենց էությունամբ ու արվեստով բնորոշ են նրանով, որ սրանց մեծ մասի նյութը վերցված է Նոր Կտակարանից, որի պարզ դրվագներն աչտեղ վերածվել են նույնպես պարզ հոգևոր երգերի: Մինևույն կանոնի գրեթե բոլոր շարականներում գլխավոր գաղափարը հաճախ է կրկնվում տարբեր խոսքերով, որը որոշ չափով թուլացնում է դրանց արվեստը, Տյառնընդատառչի և Վերափոխման կանոնները հանգիստ, զուսպ նկարագիր ունեն, իսկ Ավետյաց և Ծննդյան կանոնները համակված են ջերմ, վարակող զգացմունքներով ու խորը քնարականությամբ: Խորենացու շարականների արժեքն ու տեղը շատ բարձր են մեր հոգևոր երգերի մեջ: Այդ քնարական ու ջերմ շնչով գրված երգերը մեր հոգևոր քնարերգության գոհարներն են:

⁴² Անդ, էջ 618:
⁴³ Անդ, էջ 618:
⁴⁴ Անդ, էջ 620:
⁴⁵ Անդ:
⁴⁶ Անդ:

⁴⁷ Անդ, էջ 621:
⁴⁸ Անդ:

